80. ՋԸՌԹ ԱՖԱՐԸՄ

Չոբանն ուր աղի տուռը յոթը տարի չոբնութուն կէներ։

Աղէն ուներ մե խորոտ ախչիկըմ։ Չորնի աչք մնացեր էր ախչ-կան, հըմա աղէն չըր իտեր։ Չոբանն օխչար կարծըցեր, թաքավորն ու ուր վըղիր դարվիշ դըլըխի մըտան, ուրանց էրկիր ման գալու։ Շատ ման էկան, քիչ, ըռաստ էկան չորնին։

Տեսան օր չոբան նստեր է մե քարիմ վրա, ղավալ կը չալե, օխչար հավաքվեր ին ուր բոլոր։

Թաքավոր ըսավ.— Վա՛զիր, էրնեկ էս մարթուն, օր էս խորոտ կանչըներուն մեչ կը պտտվի։

Հ'ելան գացին ընդուր քով։—Բարև,—ըսին,—չոբան ախպեր։

— Բարով, հազար բարի, դարվեշ բաբաներ,— ըսավ,— համմե-ցեք, նստեք, ձըզի պատվիմ։

Նստան։

Չոբան հ'ելավ մե հատ ղըսըր չոկեց, մորթեց, տիկ հանեց, միսը բըթեց, լցեց տկի մեչ, հորեց գետին ու վրեն կրակը վառեց։

Միսըն տկի մեչ լա՞վ խարկըվավ։ Չոբան հանեց տիկը, կոլա-վը[1] փռեց ու միսը բացեց վրեն։ Ըտոնք կիշկեին։

Չորանն ըսավ.—Համմեցեք, կերեք, դավրեշ բաբաներ։

Թաքավոր ու վազիր զարմացած իրարու էրես իշկին, թե ըտի մունդառ է, ի՞մալ ուտինք։

Չոբանն ըսավ.—Կերե՛ք, շատ անուշ է։

---

1 Թաղիքե երկար ուսնոց, յափնչու նման (կուլաբ) (Մ. Բ.)։

Վազիր հանեց ալմաստ դանակ, միսը կիսեց, քիչմա կերավ, հրմալ համ մի տվեց ուր բերան, օր է՛լ մըսի։

Կիսեց տվեց քիչ մը թաքավորին։ Թաքավորն օր կերավ, հրմալ զարմացավ, օր էլ չը կռնամ ըսիմ։ Ու ըսկըսին, հրմա՛լ կերան, հմա՛լ կերան, օր ղուրանց անգճներ կանավ։

Գիշեր մա մացին չոբնին ղոնաղ։ Չոբան հ'ելավ լուսուն շուտ կոտ[1] մի կաթ կթեց, բերեց ուր հաբիկեն բացեց, հացն հանեց, լա՛-վըմ բրթեց, գդալներ դրեց մեչը, ըսավ.—Համմեցե՛ք, ուտենք։

Թաքավորն ու վազիրը է՛լի զարմացան։ Ըսավ.—Կերեք, հ'օրի՞ կամչնաք։

Ընդոնք ըսկըսին ուտել ու կերան, շնորակալ էղան, գացին։

Չոբան հ'ելավ կայնավ, չալեց ու խաղցավ։ Թաքավորն ու վա-զիր դառան իշին։

Մեկ լը չալեց, նստավ լացավ։

Թաքավոր ըսավ.—Վազիր, բան մի կա, մենք էտ մարթու դարտ չիմացանք։

Դառան էկան չորնի մոտ։

— Չոբան ախպեր,—ըսին,—էտ ի՞նչ է քու դարտը, օր մեկ չալիր խաղցար, մեկ լը չալիր՝ նստար լացար։

Չոբանն ըսավ.—Դուք իմ դարդին չեք կռնաք դարման էնիք։

Ըսին.—Կէնինք, ըսա՛ քու դարդ։

Ըսավ.— Իտա օխչար իմ աղի օխչարն է։ Ես ուր չոբանն եմ։ Իմ աղեն ունի մե խորոտ ախչիկ, հրմա ի՛նչ կէնիմ, չի տա ընձիկ։ Ըտոր համար չալեցի, ըսեցի՝ «Էրնեկ էն վախտ, օր ըսման իմ հարս-նիք կը խաղամ»։ Մեկ լը իմ միտք ընկավ, օր աղեն ընձիկ չի տա, նստա լացա։

Թաքավորը հանեց ուր թուխտն ու ղալամը, գրեց հրաման, ստո-ր գրեց ու պեչատեց։ Տվեց չորնին, ըսավ.—Իտա թուխտ տանիս կիտաս քու աղին, քու աղեն ախչիկ կիտա քըզիկ,— ըսավ,—հրմա էշի օխչար ու գնա։

Ըսավ.—Աչքիս վրա, դարվեշ բաբա, հրմա օր էս բան էղավ, ես քըզի պըտի փեշքեշ բերեմ, քու ադռեզը ընձի տուր։

Չոբանն ադռեզն ի առավ, հ'ելավ օխչար քշեց գեղ։

Աղեն հ'ելավ իրիշկեց օր օխչար էկավ, զարմացավ, ըսավ.— Չոբան, խո չը ծռա՞ր, իտա դախ օխչար հ'օրի՞ բերիր։

Չոբան զթուխտ հանեց, տվեց աղին։ Աղեն կարթըցվոր էր։ Օր

---

1 Թաս՝ փայտյա (Ծ. Բ.)։

թուխտը տեսավ, թաքավորի ստորագրութուն ու պեչատ տեսավ, ջանն ի դողաց։ Ըսավ.—Լա՛վ, ախչիկըմ չէ՞, ղուրպան կէնիմ քըզի։

Բերին ախչիկ տվին, հարսնիք բռնեցին, յոթն օր քեֆ էնեցին, խաղցան։

Էկավ աշուն։ Չոբան վեց հատ աղեկ ղսըր ջոկեց, տոպրակ մի աղեկ չորթան վերուց, գաթա-բան վերուց, օխչար տվեց ուր հ'առեչ ու քշեց գնաց։ Շատ գնաց, քիչ գնաց, հասավ թաքավորի պալատ։ Թուխտ տեսցուց պոստավոյին, թուլ տրվեցին, մտավ նես։

Թաքավոր աքուշկից տեսավ օր չոբանն էկավ, ըսավ.—Թողե՛ք թըխ հ'իգա իմ մոտ։

Չոբանն օխչըրներ քշեց, հ'ելավ դիվան։ Տեսավ թաքավորին, ճանչվացավ, ըսավ.—Բարով քըզի, դարվեշ բաբա։

Ըսավ.—Բարով էկար , չոբան ախպեր։

Օխչըրներ քշին մե կողմ, թաքավոր չոբնին աթոռ տվեց, նըստան։

Ըսավ.—Դարվեշ բաբա, ես իմ խոսքի տերն իմ, քըզի փեշքեշ իմ բերի։— Ու խուրճին բացեց, գաթեն հանեց, հալվեն հանեց, չորթան հանեց, դրեց թաքավորի ըստոլին.— Դե,—ըսավ,—դարվեշ բաբա, համմեցե՛ք, կերեք։

Թաքավոր ըսկըսեց ուտելը։ Օր հերթն հասավ չորթնին, վերուց օր շարթեր ուտեր, չը կրցավ ջարթեր, բռնեց խածեց։

Չոբանն ըսավ.—Հա՛յ, զը՛ռթ աֆարըմ, հա՛։

Թաքավոր էտտեղ կայնավ ու ծիծղաց։ Ուր գլխու վերև լիստավկեն[1] կախած էր։ Ըսավ.—Վազի՛ր, մենձ գրերով գրեցեք «Զը՛ռթ աֆարըմ»։

Լիստավկին գրեցին «Զը՛ռթ աֆարըմ»։

Չոբանը փեշքեշը տվեց ու ետ գառավ գնաց։

Էտ թաքավորը շատ զոռ էր ուր սինոթի վրեն։ Լալա վազիր ու ուր ծառայողները բերին գողտու թուխտ գրեցին հաստատեցին, օր դալլաքը թաքավորին թրաշ էրած վախտը մորթե։

Էկավ թաքավորի թրաշի վախտը։ Թաքավորը նստավ թրաշվելու։ Գլոխն օր բանցըրցրեց, թաքավորի աչքը ընկավ լիստավկին։ Խնդալն օր էկավ, դալլաքի ձեռը բռնեց օր արծլին բուկը չկըտրեր։ Դալլաքը չիմացավ, ընդոր համար բռնեց ու ծիծաղեց, իմացավ օր թե թաքավոր իմացավ, թե պըտի իրան մորթեր, ըտուր համար բռնեց ուր ձեռքը։

---

1 Ցուցանակ (Դ. Բ.)։

Դալլաք լըփլըփալով ըսավ.—Ես մեղավոր չեմ, Թաքավոր, քու սինոթն է որոշե, օր քու գլոխտ կտրեինք։

Թաքավոր նոր հասկըցավ. կանչեց լալա վազիր, իրա սինոթին, հ'ըմնու գլոխն էլ ղուրպան էնեց ձըզի, դալլաքին լը ուրանց հետ։ Կանչեց չորնին, բերեց պալատ, էրեց իրան վազիր. ըսավ.—Իմ փրկիչ դու ես, քու մեկ «Զը՛ոթ աֆարըմ» ընձի կիանք փրկեց։